Արձանագրություն N 2-2

ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/3 ծածկագրով վարչական սարքավորումների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 28.08.2024թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ՝	Կ. Բարսեղյան
	Գ. Խաչատրյան
	Է. Հարությունյան
	Ա. Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն. Նիկոլայան

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների մասին

(Տ. Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ <<ԻԶԻԹԵԶ>>, <<Ալֆա-Էտալոն>>, <<ՊԱՏՐՈՆ ՌՄ>> և <<Սվետան>> ՍՊԸ-ների հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ոչ մի անհամապատասխանություն չի արձանագրվել:

1.2 Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը՝

Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի

Հավելված N 1-ի մասով՝

Ներկայացված Հավելված N 1-ը՝ դիմում-հայտարարությունը չի վերաբերում ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/3 ծածկագրով գնման ընթացակարգին:

Ապրանքի ամբողջական նկարագրի մասով՝

- N 1-6 չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների մակնիշները թերի են լրացված:
- N 1, N 2 և N 5 չափաբաժիններում տեխնիկական բնութագիրը հստակ չի նկարագրված (մասնավորապես՝ **առնվազն** բառը և հրավերի բնութագրում նշված պարտադիր պայմանը անհրաժեշտ է հստակեցնել):

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել **Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժային մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 29.08.2024թ. ներառյալ)** շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում eauction.armeps.am համակարգի միջոցով շտկումներ ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում այն կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Տ. Ղուկասյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրվում է արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 30.08.2024թ. ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Տ. Ղուկասյան

Անդամներ՝ ---------- Կ. Բարսեղյան

---------- Գ. Խաչատրյան

---------- Է. Հարությունյան

---------- Ա. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Նիկոլայան